ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

«26» 09 2017թ.г.
[illegible]/3238

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Քննության առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19.09.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/31 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը 22.09.2017թ. կայացած նիստում որոշեց «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Լեմուր» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Կից ներկայացվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12
г. Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374 10) 29-44-01, Факс: (+374 10) 29-43-12

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ԾԱԾԿԱԳՐՈՎԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22-ը սեպտեմբերի 2017թ
ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝

ՀՀ ԶՈՒ Ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Համբարյանը:

Գնումները համակարգող՝

Գնումները համակարգող նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա.Մաղաքյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ՄԱ-2017/31 որոշումը քննարկելու վերաբերյալ.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ՄԱ-2017/31 որոշումը քննարկելու վերաբերյալ

(Ա. Մաղաքյան)

1.1 Քննարկելով «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ՄԱ-2017/31 որոշումը՝ գհանատող հանձնաժողովը որոշեց մերժել «Լեմուր» ՍՊԸ-ի հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ. մասնակցի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված տուժանքի մասին համաձայնությանը (Հավելված N 10) կից վճարման պահանջագրում նշված գումարը գերազանցում է ընթացակարգի հրավերի 7.1 կետով սահմանված չափը՝ հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսը, այսինքն չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

1.2 Քանի որ «Լեմուր» ՍՊԸ-ի մերժման արդյունքում ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հաջորդ տեղ զբաղեցնող «Մարինե-90» ՍՊԸ-ի առաջարկած գները գերազանցում էին պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 27.09.2017թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) նշանակվեցին բանակցություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստը հրավիրել բանակցությունների անցկացման օրը՝ 27.09.2017թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Կարապետյան

Գնահատող՝ Ռ. Զադոյան

Գնահատող՝ Հ. Բարսեղյան

Գնահատող՝ Ն. Արշակյան

Գնումները համակարգող՝ Ա. Մաղաքյան